ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1800 - Ա **31 մարտի 2009թ.**

ՆՈՐԱԳՅՈՒՂԻ Հ. 51/1 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՈՒՇ ՄԱԹԵՎՈՍԻ ՔԵՍՈՅԱՆԻ, ԳՈՀԱՐ ԱՐՏԱՇԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ՌԱԶՄԻԿ ԵՐՎԱՆԴԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ, ԱՐՄԵՆ ՌԱԶՄԻԿԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Անուշ Մաթևոսի Քեսոյանի (ծնված 08.09.1956թ.), Գոհար Արտաշի Գևորգյանի (ծնված 04.12.1928թ.), Ռազմիկ Երվանդի Սաֆարյանի (ծնված 07.10.1955թ.), Արմեն Ռազմիկի Սաֆարյանի (ծնված 19.01.1979թ.) դիմումը: Ըստ քաղաքացիների հայտարարության՝ Նորագյուղի հ. 51/1 հասցեում գույքային միավորի նկատմամբ գրանցված իրավունք առկա չէ:

Հաշվի առնելով որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1955 թվականը, Կենտրոն թաղային համայնքի ղեկավարի տեղակալի 12.06.2008թ. հ.23/35-107/250, Հայաստանի ազգային արխիվի Երևանի քաղաքային մասնաճյուղի 21.05.2008թ. հ.01-20/736, Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 09.07.2008թ. հ. 20/2-Ե/174 գրությունները, Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 03.06.2008թ. հ. 18-08/222 եզրակացությունը, համաձայն որի Նորագյուղի հ. 51/1 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Նորագյուղի հ. 51/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Անուշ Մաթևոսի Քեսոյանի, Գոհար Արտաշի Գևորգյանի, Ռազմիկ Երվանդի Սաֆարյանի, Արմեն Ռազմիկի Սաֆարյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 157.16քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 157.16քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 157.16քմ մակերեսով արտաքին չափերով շենք-շինությունների նկատմամբ:

2. Շենք-շինությունների ներքին մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով։

4. Նորագյուղի հ.51ա հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Նորագյուղի հ.51/1 տուն»։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Անուշ Մաթևոսի Քեսոյանի, Գոհար Արտաշի Գևորգյանի, Ռազմիկ Երվանդի Սաֆարյանի, Արմեն Ռազմիկի Սաֆարյանի սեփականության իրավունքն ամրագրված հողամասի և շենք-շինության նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Կենտրոն թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ